

ԳՈՒՅՔԻ՝ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՆԱԼԸ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ, ԹԵ ՎԱՐԿԱԾ

Տիգրան Մարկոսյան Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը ավանդաբար իրականացվել է մեղադրական դատավճռի հիման վրա՝ որպես հետևանք նպատակ ունենալով հանցանք կատարած անձանց զրկել այդպիսի գործունեության արդյունքում ստացված օգուտներից: Ըստ այդմ, այն ուղղված է հանցավոր ճանապարհով ստացված կապիտալի նվազեցմանը, որը կարող է օգտագործվել հետագա հանցավոր գործունեության ընթացքում, վերացնել նոր հանցագործություն կատարելու խթանները, ինչպես նաև երաշխավորել այն իրողությունը, որ հանցանքի միջոցով չի կարելի վաստակել: Մյուս կողմից, անհիմն հարստացումը խախտում է սոցիալական արդարության սկզբունքը և դրա լայն տարածումը ստեղծում է գույքային հարաբերություններում քառսի սպառնալիք և, ի վերջո, կարող է հանգեցնել սոցիալական ցնցումների¹:

Այդուհանդերձ, ինչպես նշվում է ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2218 բանաձևում, քրեական վարույթում հանցավոր գույքի բռնագանձմանը հաճախ խոչընդոտում է իրավասու մարմինների վրա դրված բարձր ապացուցողական շեմը և միջազգային համագործակցության անարդյունավետությունը²:

Շարադրվածով պայմանավորված ներկայումս մի շարք երկրների օրենսդրությունները նախատեսում են առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգեր, որոնց մի մասը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը նախաձեռնելու հիմք է դիտարկում համապատասխան քրեական

¹ Տե՛ս **Щедрин Н.В.** Проблемы и перспективы криминализации незаконного обогащения публичных должностных лиц // Имущественные отношения в Российской Федерации, Право, 2018, էջեր 63-64:

² Տե՛ս Resolution 2218, Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, adopted by the Parliamentary Assembly on 26 April 2018 (17th Sitting), 3.

վարույթը, սակայն կախված չէ դրա արդյունքից, իսկ մյուս դեպքում բռնագանձումը նախաձեռնվում է գույքի դեմ՝ անկախ որևէ քրեական վարույթի առկայությունից³:

Այլ կերպ ասած՝ երկրորդ դեպքում քաղաքացիական վարույթը իրականացվում է *in rem* ռեժիմով, որը թույլ է տալիս ոչ միայն շեղվել «ողջամիտ կասկածից վեր» ապացուցողական շեմից, այլև օրենսդրորեն ձևակերպել որոշակի կանխավարկածներ կամ գույքի սեփականտիրոջ վրա դնել ապացուցման պարտականությունը՝ պայմանով, որ նրան տրվեն համարժեք դատավարական երաշխիքներ⁴: Այս առումով ուշագրավ է նաև ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2218 բանաձևի հղումը Իռլանդիայի, Իտալիայի, Նիդերլանդների և Միացյալ Թագավորության ընդունած օրենսդրություններին, որոնք հեշտացրել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը՝ իջեցնելով ապացուցման շեմը՝ փաստական բնույթի կանխավարկածների օգտագործմամբ, իսկ որոշ դեպքերում նաև *de facto* տեղափոխելով ապացուցման բեռը պատասխանողի վրա⁵:

Հիշյալ մոտեցումն իր արտացոլումն է գտել նաև Հայաստանում ներդրված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում: Այսպես, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի⁶ (այսուհետ՝ նաև Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը: Միաժամանակ, Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու

³ Տե՛ս Использование ареста и конфискации без вынесения обвинительного приговора. Совет Европы, 2021, էջ 10:

⁴ Տե՛ս **Довидас Виткаускас, Григорий Диков.** Защищая право на справедливое судебное разбирательство, предусмотренное Европейской конвенцией по правам человека. - М.: Развитие правовых систем, 2018, էջեր 133-138:

⁵ Տե՛ս Resolution 2218, Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, adopted by the Parliamentary Assembly on 26 April 2018 (17th Sitting), 3.

⁶ Ընդունվել է 16.04.2020թ.: Ուժի մեջ է մտել 23.05.2020թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2020.05.13/50(1605) Հոդ.580:

կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով:

Վկայակոչված կարգավորումների ուսումնասիրությամբ դժվար չէ նկատել, որ մի դեպքում օրենսդիրը հակառակի վերաբերյալ ապացույցների բացակայության դեպքում խոսում է գույքի ապօրինի ծագման ենթադրության մասին, իսկ մեկ այլ դեպքում այդպիսի փաստի հաստատումը պայմանավորում է գույքի ձեռքբերումը անձի օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով չհիմնավորմամբ: Այլ կերպ ասած՝ Օրենքը գույքի՝ ապօրինի ծագում ունենալու փաստը մի դրույթում ամրագրել է որպես ենթադրելի, իսկ մյուս դեպքում ապացուցման ենթակա:

Նման պայմաններում, նախքան «գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկած»-ի բովանդակության քննարկումը, կարևոր է հակիրճ անդրադառնալ առհասարակ ապացուցողական կանխավարկածների էության և դատավարական նշանակության բացահայտմանը:

Դատավարագիտությունում ապացուցողական կանխավարկածներն դիտարկվում են որպես ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոններ, որոնց ուժով որոշակի փաստ վկայակոչող գործին մասնակցող անձն ազատվում է այն ապացուցելու պարտականությունից, եթե ապացուցում է դրա հետ կապված մեկ կամ մի քանի այլ փաստ, իսկ հակառակն ապացուցելու պարտականությունը դրվում է օրենքով նախատեսված սուբյեկտի վրա⁷: Ըստ այդմ, որպես կանխավարկած ամրագրող նորմի տարրեր առանձնացվում են դրա հիպոթեզը (կանխավարկածի գործողության պայմանները), դիսպոզիցիան (նույնը ինքը՝ ենթադրվող փաստը) և «հակականխավարկածը», այսինքն՝ կանխավարկածի

⁷ Տե՛ս **Մեղրյան Ս.Գ.** Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում / Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 104-105:

հերքման հնարավորության նախատեսումը: Ընդ որում, հենց վերջին տարրն է կանխավարկաձև կանխավարկաձ դարձնում⁸:

Շարադրվածին համապատասխան ապացուցողական կանխավարկաձևները իրականացնում են որոշակի դատավարական գործառույթներ, որոնցից են կանխավարկաձի գործողության համար անհրաժեշտ փաստերի (փաստեր-հիմքեր) և կանխավարկաձի հերքող փաստերի էականության պայմանավորումը և ապացուցման առարկայի շրջանակում ներառումը, ապացուցման բեռից ազատումը և հակառակի ապացուցման բեռի սահմանումը, ինչպես նաև դատավարական խնայողությունը⁹:

Հետևաբար, ակնհայտ է, որ Օրենքում ձևակերպված «գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկաձ»-ը բովանդակային առումով չի համապատասխանում ապացուցողական կանխավարկաձների ավանդական ընկալմանը, քանի որ.

1. օրենսդիրը չի նախատեսել այս կանխավարկաձի ուժով ենթադրվող փաստի հետ կապված այն փաստը կամ փաստերը (կանխավարկաձի գործողության պայմաններ), որոնք ապացուցելու դեպքում գույքի՝ ապօրինի ծագում ունենալու փաստի առկայությունը պետք է համարել հաստատված.

2. գույքի՝ ապօրինի ծագում ունենալու փաստը հանդիսանում է ապացուցման ենթակա, ընդ որում՝ այդ բեռը դրված է Դատախազության վրա, որը պետք է իրականացվի անձի օրինական եկամտի աղբյուրների անհրաժեշտ չափի բացակայության փաստի ապացուցմամբ:

Քննարկվող համատեքստում ուշագրավ է նաև Օրենքի ընդունման հիմնավորումը, որի համաձայն.

⁸ Տե՛ս **Мильков П.И., Жагорина С.А.** Доказательственные презумпции в гражданском и арбитражном процессе: теоретический аспект // Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского, Право, 2011, էջ 285:

⁹ Տե՛ս **Зацепина О.Е.** Классификация правовых презумпций // Актуальные проблемы российского права, Право, էջ 84:

«53. Ինչպես քրեական (ընդլայնված բռնագանձում), այնպես էլ քաղաքացիական բռնագանձման ռեժիմները տարբեր երկրներում գործում են գույքի հանցավոր ծագում ունենալու կանխավարկածի հիման վրա, որը ձևավորվում է օբյեկտիվ հանգամանքների առկայության պայմաններում: Այդպիսի օբյեկտիվ հանգամանքներ կարող են լինել անձի եկամուտների և գույքի անհամապատասխանությունը կամ...:

75. Վերոնշյալի հիման վրա և հաշվի առնելով, որ գույքի ծագման վերաբերյալ ապացույցները, այն ծավալով, որով դրանք ձեռք բերելու հնարավորություն չունի իրավասու մարմինը, գտնվում են գույքը ձեռքբերած անձի մոտ՝ օրենքի նախագիծը նախատեսում է հայցի բավարարման հնարավորություն, եթե իրավասու մարմինը ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը չի հիմնավորվում հայցվորին հասանելի օրինական եկամուտների վերաբերյալ տվյալներով: Համապատասխանաբար, պատասխանողը կարող է հերքել կանխավարկածը՝ ապացուցելով գույքի օրինական ձեռքբերումը՝ ներկայացնելով այն փաստաթղթերը, որոնք օրենքի ուժով հասանելի են միայն պատասխանողին:....»:¹⁰

Նման պայմաններում կարելի է եզրահանգել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, թեկուզև նախատեսում է «գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկած» ձևակերպումը, այնուամենայնիվ, տվյալ դեպքում խոսք է գնում ոչ թե կանխավարկածի, այլ վարկածի մասին: Այսինքն՝ ենթադրություն, որը դեռևս ենթակա է ապացուցման: Ընդ որում, օրենսդիրը արդարացիորեն սահմանափակել է նման ենթադրության ձևավորման համար անհրաժեշտ ապացուցողական նյութի շրջանակը միայն իրավասու մարմնին հասանելի օրինական եկամուտների վերաբերյալ տվյալներով, քանի որ հակառակ մոտեցումը կլիներ անիրագործելի առնվազն այն պարզ իրողության պատճառով, որ գույքի

¹⁰ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1931/about>

սեփականատիրոջից բացի այլ անձինք օբյեկտիվորեն չունեն այդ հարցով ամբողջական տեղեկատվություն ստանալու հնարավորություն:

Հարկ է նշել, որ, որպես այս մոտեցման տրամաբանական շարունակություն, գույքի՝ ապօրինի ծագում ունենալու վարկածի հաստատումը ևս ենթարկվում է ոչ ստանդարտ ապացուցողական շեմի: Խոսքը «հավանականությունների հավասարակշռման» կամ «ապացույցների գերակշռման» չափանիշի մասին է, որի կիրառելիությունը թույլատրելի է գնահատվել նաև ՄԻԵԴ կողմից: Այսպես, ինչպես նշվում է Օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն 19.12.2022 կարծիքում. «Ինչ վերաբերում է ապացուցման չափորոշիչին, ՄԻԵԴ-ն օրինական է համարել, որ համապատասխան ներպետական մարմինները բռնագանձման որոշումներ կայացնեն՝ հիմնվելով ապացույցների գերակշռության վրա, որոնք ենթադրում են, որ պատասխանողների օրինական եկամուտները չէին կարող բավարար լինել խնդրո առարկա գույքը ձեռք բերելու համար: Իրոք, ամեն անգամ, երբ ծանր հանցագործություններից ստացված եկամուտների մասով քաղաքացիական դատավարության արդյունքում բռնագանձման մասին որոշում է կայացվել, Դատարանը նման վարույթում գույքի ապօրինի ծագման վերաբերյալ «ողջամիտ կասկածից դուրս» ապացույցներ չի պահանջել: Փոխարենը, հավանականությունների հավասարակշռության կամ ապօրինի ծագման մեծ հավանականության վերաբերյալ ապացույցը, որը զուգորդվում է սեփականատիրոջ՝ հակառակն ապացուցելու կարողության հետ, բավարար է համարվել թիվ 1.1 Արձանագրության 1-ին Հոդվածի համաձայն համաչափության թեստի նպատակների համար»¹¹:

Միաժամանակ, անկախ այն հանգամանքից, թե գույքի՝ ապօրինի ծագում ունենալը դիտարկվում է կանխավարկած, թե վարկած՝ օրենսդիրը նախատեսել է այն հերքելու հնարավորություն: Մասնավորապես, Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատասխանողը կարող է հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու

¹¹ Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfid=CDL-AD\(2022\)048-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfid=CDL-AD(2022)048-e), կետ 23:

կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ, իսկ նույն հոդվածը 4-րդ մասը սահմանում է, որ այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով:

Հասկանալի է, որ որևէ երևույթ հերքելու համար անհրաժեշտ է այդ երևույթի առնվազն առերևույթ առկայություն: Հետևաբար, գույքի՝ ապօրինի ծագում ունենալը ենթադրությունը հերքելու հարցին անդրադառնալու խնդիրը պետք է դիտարկվի միայն այն բանից հետո, երբ առկա ապացույցների հիման վրա շոշափելի է առաջ քաշված վարկածի հիմնավորվածությունը:

Այսպիսով, կատարված հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. «Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկած» ձևակերպումը բովանդակային առումով չի համապատասխանում ապացուցողական կանխավարկածների դատավարագիտական ընկալմանը.

2. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում ունի ոչ թե կանխավարկածի, այլ վարկածի բնույթ.

3. Օրենսդիրը արդարացիորեն սահմանափակել է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու վերաբերյալ Դատախազության վարկածի ձևավորման համար անհրաժեշտ ապացուցողական նյութի շրջանակը միայն հասանելի օրինական եկամուտների վերաբերյալ փվյալներով.

4. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու վարկածը ենթակա է հաստատման կամ հերքման ապացուցման «հավանականությունների հավասարակշռման» չափանիշով.

5. Գույքի ձեռքբերման օրինականությունը ապացուցելու պարտականությունը կատարելու անհրաժեշտությունը ծագում է գույքի՝ ապօրինի ծագման վարկածի առերևույթ հիմնավորվածության պայմաններում: